ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«11» փետրվարի 2025 թվականի N 02-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև հաշվի առնելով 31.01.2024թվականին կայացած հանրային լսման արձանագրությունը՝ Գյուլագարակ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (5)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		–	–	–
Օհանյան Ռուսլան		–	–	–
Սարգսյան Միդա		–	–	–
Նալբանդյան Նարեկ		–	–	–
Մուրադյան Դավիթ		–	–	–
Պառավյան Գոհար		–	–	–
Այվազյան Սերյոժա		–	–	–
Գրիգորյան Արսեն		–	–	–
Այվազյան Վրույր	–	–	–	–
Գևորգյան Համլետ	–	–	–	–
Քալաշյան Վարսենիկ	–	–	–	–
Արոյան Տիգրան	–	–	–	բացակա
Տոնոյան Արփյոմ	–	–	–	–
Գրիգորյան Թամարա	–	–	–	–
Սարգսյան Ալիկ	–	–	–	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025թ. ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի 02 -Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1.ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեն եկամուտների մասով կատարվել է 83.5 %-ով,բյուջեով նախատեսված 918 748 750 դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել է 767 179 663 դրամ:

Սեփական եկամուտների գծով կատարվել է 95.1 % :Բյուջեով նախատեսված 176 004 350 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 167 450 713 դրամ: 2023թ.սեփական եկամուտները կազմել են 97.1 % 2024թ. ի համեմատ պակաս է 2.0 %-ով:

Որից՝

.Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար փաստացի մուտքը կազմել է 8 294 264 դրամ, կատարվել է 82.9 %-ով:Նախորդ տարվա համեմատությամբ /2023թ.- 9 208 474 դրամ / պակաս է 914 210 դրամ 11.0 %-ով:

.Գույքահարկի գծով փաստացի մուտքը 36 146 000 դրամի դիմաց կազմել է 37 577 848 դրամ,կատարվել է 103.9%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ /2023թ-29 186 999 / ավելացել է 8 390 848 դրամ կամ 22.3 %-ով:

.Անշարժ գույքի հարկի մուտքը 34 260 800 դրամի դիմաց կազմել է 28 580 586 դրամ , կատարվել է 83 4%-ով: /2023թ. -25 958 059 դրամ/ ավելացել է 2 622 527 դրամով կամ 9.1%-ով:

Տեղական տուրքերը նախատեված 2 400 000 դրամի դիմաց կազմել է 2 423 700 դրամ ,կատարվել է 100.9 %-ով,նախորդ տարվա համեմատությամբ /2023թ. 2 002 535 դրամ /ավելացել է 421 165 դրամ կամ:

Գույքի վարձակալությունից եկամուտները կատարվել են 87.0 %-ով ,նախատեսված 9 828 600 դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 8 557 047 դրամ /որից 7 777 047 դրամ հողի վարձավճար, 780 000 գույքի վարձավճար: Նախորդ տարվա համեմատությամբ /2023թ. – 7 737 845 դրամ / ավելացել է 139 202 դրամ :

.Վարչական գանձումները/տեղական վճարներ/ նախատեսված 10 955 900 դրամի դիմաց մուքերը կազմել են 12 891 321 դրամ,կատարվել է 117.6 %-ով:Նախորդ տարվա համեմատությամբ-/2023թ. 11 851 863 հազար դրամ / ավելացել է 1 039 457 դրամով:

Աղբահանության համար վարձավճարը նախատեսված 4 955 900 դրամի դիմաց հավաքագրվել է 4 385 337 դրամ,կատարվել է 88.4 % -ով:

Նախորդ տարվա համեմատությամբ/2023թ. 4 431 300 դրամ/ պակաս է հավաքագրվել է 45 963 կամ:

Համայնքային ենթակայության մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հատատությունների ծառայություններից օգտվողների նախատեսված 5 500 000 դրամի դիմաց հավաքագրվել է 5 404 482 դրամ,կամ կատարվել է 98.2%-ով /2023թ. հավաքագրվել է 5 631 300 դրամ/:

պակաս է հավաքագրել 226 818 դրամ:

Այլ եկամուտները կազմել են 63 775 886 դրամ նախորդ տարվա համեմատությամբ պակասել է 90 016 989 դրամով:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝

պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 316 744 200 դրամը ստացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 97 833 000 դրամով:

Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվել է 282 984 750 դրամ,նախատեսված 426 000 200 դրամի դիմաց:

Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը/հավելուրդը կամ դիֆիցիտը/ կազմել է 45 204 938 դրամ:

2.ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Ըստ գործառնական դասակարգման.

Գյուլագարակ համայնքի 2024թվականի բյուջեն ծախսերի գծով կատարվել է 81.3%- ով: Նախատեսված 929 855 750 դրամի դիմաց կատարողականը կազմել է 756 547 923 դրամ,որից 438 989 975 դրամը վարչական բյուջեի մասով,իսկ 370 075 448 դրամը ֆոնդային բյուջեի մասով: Ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 182 168 173 դրամով:

.Աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսված 156 282 640 դրամի դիմաց կազմել է 140 024 689 դրամ, կամ կատարողականը կազմել է 89.5%: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 28 319 362 դրամով:

.Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով 42 851 000 դրամի դիմաց ծախսերը կազմել են 30 803 380 դրամ՝ 71.8%: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 11 627 982 դրամով:

.Գյուղատնտեսության մասով 32 848 249 դրամի դիմաց ծախսերը կազմել են 32 589 358 դրամ՝ կատարվել է 99.2%: Նախորդ տարվա համեմատությամբ պակասել է 120 564 866 դրամով:

.ճանապարհային տրանսպորտի համար նախատեսված 37 300 000 դրամի դիմաց ծախսերը կազմել են 16 403 800 դրամ կամ կատարողականը կազմել է 73.2%: Նախորդ տարվա համեմատությամբ պակասել է 5 205 577 դրամով: Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկանող նախատեսված/հողի և գույքի օտարումից/ -20 000 000 դրամի դիմաց մուտքերը կազմել է- 71 045 531 դրամ:

Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 24 917 184 դրամով;

.Աղբահանության նախահաշվով նախատեսված ծախսերը 168 000 դրամի դիմաց կազմել է 163 500 դրամ կամ կատարողականը կազմել է 97.3 %;Նախորդ տարվա համեմատությամբ ավել է 138 500 դրամով;

.Ջրամատակարարման գծով ծախսերը նախատեսված 220 154 730 դրամի դիմաց կազմել են 181 970 610 դրամ,կամ կատարողականը կազմել է 82.6 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 180 824 610 դրամով:

.Փողոցային լուսավորության գծով նախատեսված 81 230 628 դրամի դիմաց ծախսերը կազմել են 66 822 859 դրամ՝ 82.2 %:Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 29 608 575 դրամով:

.Ընդհանուր սպասարկում ՀՈԱԿ-նախատեսված 47 000 000 դրամի դիմաց ծախսերը կազմել են 43 588 118 դրամ՝ 92.7 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել 4 873 027 դրամով:

.Այլ մշակույթային կազմակերպությունների գծով նախատեսված 4 240 000 դրամի դիմաց ծախսվել է 4 116 420 դրամ՝ 97.0%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 749 690 դրամով:

. կրոնական ծառայությունների բնագավառով նախատեսված 1 500 000 դրամի դիմաց կատարվել է 1 500 000 դրամ ծախս կամ կատարողականը կազմել է 100%

Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 700 000 դրամով:

.Նախադպրոցական կրթության մասով նախատեսված 282 978 736 դրամի դիմաց կատարվել է 265 409 447 դրամ, 2023թ. կատարվել է 144 903 116 դրամ կամ ավել 120 506 331 դրամ:

.Միջնակարգ կրթության բնագավառով նախատեսված 800 000 դրամի դիմաց ծախսերը կազմել են 800 000 դրամ կամ կատարողականը կազմել է 100 %; Նախորդ տարվա համեմատությամբ պակասել է 1 000 000դրամով:

.Արտադպրոցական՝արվեստի դպրոցի մասով նախատեսված 29 673 767 դրամի դիմաց ծախսերը կազմել են 29 183 272 դրամ՝ 98.3 %: Ֆոնդային մասը կազմել է 12 018 767 դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ պակասել է 41 422 698 դրամով:

.Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 11 760 000 դրամի դիմաց կազմել են 10 150 000 դրամ կամ կատարողականը կազմել է 86.3 %; Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 650 000 դրամով;

Մահեր- 1 590 000դրամ

Ծնունդներ- 1 460 000դրամ

Սոցեր- 7 100 000 դրամ

.Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդը կազմել է 52 517 500 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ